ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» 03 2023 թ.

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Ակադեմիա)՝ ի դեմս ռեկտոր Սերգեյ Առաքելյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, և **«Հանրային կառավարման զարգացման, ռազմավարական հետազոտությունների և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպությունը** (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս Հիմնադիր-նախագահ Աշոտ Զալինյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր),

կարևորելով *հանրային կառավարման ոլորտում շարունակական բարեփոխումների իրականացումը, հանրային քաղաքականության մշակման ու իրականացման ոլորտում նորարարական մոտեցումների տարածման առաջնահերթությունը,*

ընդգծելով *հանրային կառավարման զարգացման և հանրային կառավարման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը,*

նպաստելով *հանրային ծառայողների, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անձնակազմերի մասնագիտական և շարունակական վերապատրաստման գործընթացի բարելավմանը և կազմակերպմանը՝ կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.*

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակում համագործակցել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող՝ Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, հուշագրի 2-րդ կետով նախատեսված, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերն իրենց իրավասության շրջանակում կհամագործակցեն հետևյալ ուղղություններով՝

2.1. երկկողմ հետաքրքրություն ներկայացնող կրթական բնույթի ծրագրերի իրականացում,

2.2. համապատասխան ոլորտներում փորձաքննությունների իրականացում,

2.3. գիտաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպում, գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակում,

2.4. համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկում և խնդիրների լուծում,

2.5. կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրապարակում,

2.6. սույն հուշագրի գործողության շրջանակում Կողմերի գործառույթների կատարման համար՝ ըստ աշխատանքային անհրաժեշտության համապատասխան սարքավորումների, լաբորատոր և այլ միջոցների օգտագործում,

2.7. նորարարական, դրամաշնորհային և մրցութային տարբեր ծրագրերի համատեղ իրականացում,

2.8. համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, ինչպես նաև՝ դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվության տրամադրում:

3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական և այլ պարտադիր պարտավորություններ չի առաջացնում: Կողմերն առանձին դեպքերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադարձ համաձայնությամբ սույն հուշագրի 2-րդ կետով սահմանված որոշակի ուղղությունների հետ կապված ծառայությունները կարող են իրականացնել դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված ֆինանսական բնույթի գրավոր համաձայնագրերով՝ պայմանավորված այս կամ այն Կողմի ուժերով իրականացվող աշխատանքների ծախսատարությամբ:

3.2. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

3.3. Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

3.4. Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, որոնք կհամարվեն դրա անբաժանելի մասը:

3.5. Սույն հուշագիրը կազմված է հայերեն՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հասցե՝ ՀՀ, 0054, ք. Երևան, Փիրումյանների 9

Հեռ.՝ +374 60 460087

Էլ. հասցե՝ info@justiceacademy.am

Կայքէջ՝ www.aoj.am

Ռեկտոր՝

Ս.Առաքելյան

Կ.Տ.

«Հանրային կառավարման զարգացման, ռազմավարական հետազոտությունների և վերապատրաստման կենտրոն» ՀԿ

Հասցե՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Ամիրյան 18/75

Հեռ.՝ +374 99 393932

Էլ. հասցե՝ padcresearch@gmail.com

Կայքէջ՝ www.padcresearch.am

Հիմնադիր-նախագահ՝

Ա.Զարինյան

Կ.Տ.